

ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԳՈՒՄԱՐՄԱՆ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (06.02.2017-04.05.2017)
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման տասներորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 2 չորսօրյա նիստ: Երկրորդ չորսօրյայի վերջին օրվա նիստը և հաջորդ 3 չորսօրյա նիստերը չկայացան՝ քվորումի բացակայության պատճառով:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 153 հարց, որից 82-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 65-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների (1-ը ՀՀ ԱԺ որոշման նախագիծ), իսկ 6-ը պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր էին: Օրակարգի միջազգային պայմանագրերի վավերացման մասին բաժինն ընդգրկում էր 33 միջազգային պայմանագիր:

Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 14 հարցով, այդ թվում՝ 12-ը ՀՀ կառավարության նախաձեռնություն (6-ը անհետաձգելի), 1-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորական նախաձեռնություն և 1-ը՝ պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր: Օրակարգը լրացվել է նաև 6 միջազգային պայմանագրով:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 206 հարցերից (ներառյալ միջազգային պայմանագրերը) 159-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից գարնանային նստաշրջանի ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 27-ը, որոնցից 25-ը՝ ՀՀ կառավարության (5-ը կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի), իսկ 2-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների

նախաձեռնած նախագծեր էին: Միջազգային պայմանագրերից զատ քննարկվել է 2 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարց:

Նստաշրջանի ընթացքում ընդունված օրենքների նախագծերից հատկապես հիշարժան են «Ձինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով տրվող իրավական կարգավորումների նպատակն է մարտական հերթապահություն իրականացնելիս կամ առաջնագծում ծառայողական պարտականություններ կատարելիս փրկարարական ծառայողի ստացած վնասվածքի կամ խեղման կամ ծագած հիվանդության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բուժման (հետազոտության) անհնարինության դեպքում, փրկարարական ծառայողների բուժումն իրականացնել օտարերկրյա պետությունում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ նույն օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ առաջարկվում է «Ձինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով նախատեսված զինծառայողի ընտանիքի անդամի մահվան դեպքում միանվագ դրամական օգնության տրամադրման մասին դրույթը տարածել նաև ծառայողական բնակելի տարածությունում բնակվող կամ բնակելի տարածությունների վարձակալության համար դրամական փոխհատուցում ստացող զինծառայողի՝ այլ վայրում բնակվող ծնողների վրա: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է հանել (դադարեցնել) տուգանքի գումարը սահմանված ժամկետում չվճարելու հիմքով դրա նկատմամբ 25 կամ 50 տոկոս չափով հաշվեգրվող ավելացումների ինստիտուտի կիրառումը: «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ

կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է վերացնել գույքի հավատարմագրային կառավարման գործարքի կնքման ժամկետային սահմանափակումը, ինչը խթան կհանդիսանա գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու իրավահարաբերությունների ակտիվացման համար, ինչպես նաև կնպաստի ներդրումային միջավայրի զարգացմանը, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով կապահովվի պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման արդյունավետության բարձրացումը: Մասնավորապես՝ կսահմանվեն հստակ չափանիշներ, որոնք կդրվեն և՛ անկախ հանձնաժողովի, և՛ դատարանի պատճառաբանված որոշումների հիմքում, դատապարտյալն իրավունք կունենա մասնակցելու իրեն վերաբերող եզրակացության կայացմանը և իրականացնելու համապատասխան պաշտպանություն, ինչպես նաև սոցիալական ապահովվածության առումով կարևոր էին «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում կատարված փոփոխությունները, որով միջազգային լավագույն փորձի հիման վրա հստակեցվել է կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կողմից ֆոնդի մասնակիցներին պատճառված վնասների հատուցման գործընթացը, այդ թվում՝ կառավարիչների ֆիդուցիար պարտականությունների շրջանակը: Կատարվող փոփոխությունները նպատակ են հետապնդում մեխանիզմներ ստեղծել կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերի մասնակիցների շահերի լիարժեք պաշտպանության և համակարգի նկատմամբ վստահության բարձրացման համար: Նախագծերի փաթեթով նախատեսվում է նաև, որ ոչ հրապարակային պայմանագրային ֆոնդի փայերը կարող են ձեռք բերվել գույքի դիմաց: Նախատեսվում է նաև, որ եթե ֆոնդը պատրաստ է փայի դիմաց ընդունել գույք, ապա փայի դիմաց կարող է տրամադրվել միայն այնպիսի գույք, որում տվյալ ֆոնդը իր ներդրումային քաղաքականության համաձայն պատրաստվում է ներդրումներ կատարել:

ԱԺ-ն նաև քննարկեց և քվեարկությամբ մերժեց ԱԺ պատգամավորների նախաձեռնած 1 օրենքի և 1 ԱԺ-ի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին ԱԺ-ի որոշման նախագծերի՝ «ԱԺ նստաշրջանի օրակարգ ընդգրկելու մասին հարցը»:

Նստաշրջանի ընթացքում՝

- քննարկվեց և 72 կողմ, 10 դեմ, 6 ձեռնպահ ձայներով հաստատվեց «ԱԺ վերահսկիչ պալատի 2017 թվականի գործունեության տարեկան ծրագիրը»:
- փակ, գաղտնի քվեարկությամբ 99 կողմ, 0 դեմ ձայներով Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահ նշանակվեց Լևոն Յոլյանը:

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորները «ԱԺ կառավարությանը դիմել են 4 գրավոր, որոնցից «ԱԺ նիստերի ընթացքում հնչել է 2-ը և 21 բանավոր հարցով: Հնչել է 36 պատգամավորական հայտարարություն, որոնցից 7-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը»:

Նստաշրջանների ընթացքում վավերացվեց 15 միջազգային պայմանագիր: Այդ թվում՝ 2016 թվականի հոկտեմբերի 27-ին Փարիզում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև միգրացիոն գործընկերության վերաբերյալ» համաձայնագիրը: